

- 5 Ընդ որս եւ մատամբ ցուցանէր նոցուն
 Զոմանց նորահնար լուծմունս անկայուն,
 Որ չէր ողջամիտ վարդապետութիւն,
 Այլ չար Ասորոց, Յունաց թիւրութիւն:
- 6 Զորս եւ համոզէր բանիւ անդադար,
 Ծածուկ եւ յայտնի ի տան է՝ ի տաճար,
 Գրխով է՝ անդամօք որոնել ըզճար,
 Յարտուղեաց սրբել զերգս մեր, գիրս եւ ճառ:
- 7 Յուցեալ թէ առանց սոյն սրբազրութեան,
 Յաւէտ իրաւամբ ուղղափառ բերան,
 Մեղադրեալ զԱզգ մեր ի խորշ եւ յատեան,
 Հերձուած անուանէ ընդ իւր յամառման:
- 8 Իսկ սոյն բան Սարգսի միայն սակաւուց
 Շարժէր փոյթ եւ ջան է՝ այն տարապարտուց,
 Զի ուր ոչ կամի գործել ջան յոգունց,
 Անդ զոչինչ կարէ առնել փոյթ փոքունց:
- 9 Ի մերոց թէպէտ բաղումք առանձին
 Բան նորին ըստոյգ գոլ հաստատէին,
 Ի՛ ի մեզ թիւր յոմանց մուծեալ փորձէին,
 Այլ սրբազրել զայն անփոյթ լինէին:
- 10 Զի կէսք առ ահին, ոմանք առ փառաց,
 Եւ այլ ընդ պէսպէս սին պատճառանաց,
 Որպէս առաջնորդ գրտեալ կոյր կուրաց՝
 Միշտ ի խորխորատ մընային անկած:
- 11 Զայն տեսեալ Սարգսի լինէր յուսահատ,
 Ե կալն ընդ նոսին յաւէտ անանջատ
 Պատճառէր խղճի մըտաց իւր արատ,
 Եգեալ ի վըտանդ զիւր ամբիժ հաւատ: